ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ք. Եղեգնաձոր

« 17 » հուլիսի 2018թ N 35

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ N15 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001թ. օգոստոսի 16-ի ,,Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգը հաստատելու մասին,, N 762 որոշմամբ հաստատված հավելվածի 11- րդ գլխի 62- րդ կետի պահանջները

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության ներմարզային երթուղիների հատկացման մարզային մրցութային հանձնաժողովի 2018 թվականի հուլիսի 10-ի N15 արձանագրությունը

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ Խ. Ասլանյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ